

**ՔԱՆԱՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԼԻԱՐՈՒՌՆ
ՄԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ 206 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ
ԳՈՅԱՅԱԼԻ ԼԻՔԱՆԱՆՀԱՅՈՒԹԵԱՆ
Ի ՆՊԱՍՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ
ՆՈՒՐԱՀԱՄԱՔ-ԹԵԼԵԹՈՒՆԻ**



Կրկին մթազնած է Միջին Արեւելքի սիրտը կազմող Լիբանանի երկինքը. բազմաչափ այս երկիրը տեսած է պատերազմ, վկայած է հակամարտություններ, ապրած է կենցաղային ճգնաժամեր, տնտեսական տազնապներ, իսկ վերջերս «Զորոնեա» ժահրի տազնապը եկաւ իր աւերիչ դրոշմը ղնելու երկրին տնտեսական ու կենցաղային իրավիճակին վրայ: Դետգիտտ վատթարացող կացութիւնը իր գագաթնակտին հասաւ տնտեսական ճգնաժամով, որուն իբրեւ հետեանք վտանգուեցաւ նաեւ հայ գաղութը, ու «դանակը ոսկորին հասաւ»:

Քանատահայութիւնը միշտ լիաբունն օժանդակութիւն հասցուցած է հոն, ուրկէ եկած է տազնապի ծայրը՝ հայրենիքէն եկած ըլլայ ան թէ սփիւռքի որեւէ գաղութ:

Լիբանանահայութեան տազնապին նկատմամբ ձեռնաձաղ չմաց բանատահայ գաղութը, որ հայ ազգը հարուածող պատուհասներուն ընդառաջ միշտ եղած է առաջնեկը, որ օգնութեան ձեռք կ'երկարէ օժանդակելու համար մեր հայրենակիցներուն ամենուրեք՝ Զայաստանի, Արցախի կամ սփիւռքի մեր օճախներուն մէջ: Դետեաբար, անվարան յառաջացող Լիբանանահայութեան օժանդակութեան մարմին մը, որուն իրենք մասնակցութիւնը բերին գաղութի կազմակերպութիւններն ու փութիւնները, եւ կոչ ուղղուեցաւ համայն բանատահայութեան՝ անտարբեր չմնալու լիբանանահայութեան օգնութեան կանչին հանդէպ:

Այս ընթացք առին դրամահաւաքի աշխատանքները, եւ բանատահայութիւնը, իր աւանդութեան համաձայն, անսաց Օժանդակութեան մարմինի կոչին ու իր պատրաստակամութիւնը յայտնեց՝ անվերապահ մասնակցութիւնը բերելով լիբանանահայութեան ի նպաստ կազմակերպւած թելեթոն-նուիրահաւաքին, որ տեղի ունեցաւ հիւնգշաբթի, 9 յուլիս 2020-ին:

Նշեալ դրամահաւաքին սրտի խօսքերով ու ելոյթներով հանդէս եկան կազմակերպութիւններու եւ փութիւններու ներկայացուցիչներ, ԴՅԴ Զանատայի Կեդրոնական կոմիտէն, ԴՅԴ երիտասարդական, պատանեկան եւ ուսանողական փութիւններու անդամներ, ԴՄՄՄ-ականներ, Դամազգայինի անդամներ, ԴՄՄ-ի անդամներ, Մոնրէալի Մուրք Յակոբ ազգային վարժարանի եւ Թորոնթոյի ԴՄՄ-ի ամենօրեայ վարժարանի շանկերտներ եւ Զանատայի Դայոց թեմի առաջնորդ Քաբգէն արքեպիսկոպոս Զարեան, նաեւ՝ հայրենի եւ սփիւռքահայ արուեստագետներ, որոնք բոլորը իրենց զօրակցութիւնն ու անվերապահ աջակցութիւնը յայտնեցին լիբանանահայութեան եւ կոչ ուղղեցին բանատահայութեան՝ իրենց լուման բերելու տազնապալի վիճակի մէջ յայտնուած մեր ժողովուրդին ի նպաստ: Դայրենի եւ սփիւռքահայ արուեստագետներու մասնակցութիւնը երանգ տուաւ նուիրահաւաքի յայտագիրին:

Կոչերը ապարդին չեղան, ի գուր չանցան Լիբանանահայութեան օժանդակութեան մարմինի աշխատանքները, անպատասխան չմնացին անել կացութեան մատնուած լիբանանահայութեան օգնութեան կանչերը, այլ անգամ մը ես բանատահայութիւնը փաստեց, որ միշտ կողքին է մեր ժողովուրդին, յատկապէս այն հատուածին, որուն կը սպառնայ դոյզն վտանգ մ'իսկ:

Լիբանանահայութիւնը պիտի մնայ համայն հայութեան գուրգուրանքի առարկայ, քնաւ իր ճակատագիրին պիտի չյանձնուի, առանձին պիտի չմնայ, այլ կրկին՝ անգամ իր ներքին կենսունակութեամբ, ամրակուր կամքով եւ իր իւրապատեկ տոկունութեամբ պիտի յաղթահարէ այս տազնապ տես, դուրս պիտի գայ այս փապուղիէն առաւել զօրացած ու առաւել փասնակամ:

Սփիւռքի գարկերակը կազմող այս գաղութին դերն ու դրոշմը՝ աշխարհասփիւռ հայկական գաղութներուն վրայ, ծանօթ է բոլորիս, այս իրականութեան անդրադարձաւ ԴՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատուրեան՝ ըսելով. «Զամայն հայ ժողովուրդին ուշադրութեան եւ հոգածութեան առարկան պէտք է դառնայ լիբանանահայութիւնը, որուն դերը չի սահմանափակուի Լիբանանով ու Միջին Արեւելքով, այլ ունի համահայկական, համաափիւռքեան տարողութիւն»:

«Զանատահայութիւնը հաւատացողն է հայ ժողովուրդի ամբողջականութեան սկզբունքին եւ ունի այդ ամբողջականութիւնը ամուր ու հօգր պահելու վճռակամութիւն»:

այս խօսքերով բանատահայութեան կեցուածքը գնահատած էր Լիբանանի «Վանալ ծայր»-ի տնօրէն Վիգէն Աւագեան, որուն լիիրա հաւաստիքը տուաւ Զանատայի հայ համայնքը 9 յուլիսին իր անսակարկ նուիրումը ցուցաբերելով հայ ժողովուրդի այն հատուածին նկատմամբ, որ ատենօք երբեք չէ զլացած նաեւ ի'ր լուման բերելու աշխարհասփիւռ ու հայրենի մեր ժողովուրդին:

«ԴՈՐԻՇՈՆ»
Շար.ը՝ էջ 4

**ԹՈՒՐԵՈՅ ԳԵՐԱԳՈՅՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆԸ
ՋՆՁԵՅ Ս. ՍՈՓԻԱՆ ՄՉԿԻԹԵ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՎԵՐԱԾԵԼՈՒ 1934-Ի ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԷՐՏՈՂԱՆ ՍՏՈՐԱԳՐԵՅ ՋԱՅՆ
ՄՉԿԻԹԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ**

Թուրքիոյ գերագոյն վարչական դատարանը երէկ ջնշեց Ս. Սոֆիան թանգարանի վերածելու Թուրքիոյ կառավարութեան 1934 թուականի որոշումը՝ այդպիսով ճամբան հարթելով զայն մզկիթի վերածելու Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի մտադրութեան գործադրութեան առջեւ:

«Կրիքսիթիթայմը» կայքը հաղորդեց, որ Էրտողանի գաղտնի խորհրդականը եղող թուրք լրագրող Մեհմեթ Արըջ «Թուիթթըր»-ի վրայ գրած է, թէ դատարանը միաձայնութեամբ ջնշած է 27 նոյեմբեր 1934-ի որոշումը:

Դատարանի որոշումի հրապարակումէն

անմիջապէս ետք Էրտողան ստորագրեց Ս. Սոֆիան մզկիթի վերածելու հրամանագիրը:

«Սըայ Նիուզ» հաղորդեց. «Յունաստան կը քննադատէ Այա Սոֆիայի կարգավիճակը փոխելու վերաբերող Էրտողանի որոշումը՝ զայն նկատելով միջազգային ընտանիքին ուղղուած «բացայայտ գրգռութիւն մը»:

Ռուսիոյ ուղղափառ եկեղեցին իր կարգին ցաւ յայտնեց, որ թրքական դատարանը Ս. Սոֆիայի թանգարանի կարգավիճակը ջնշելու իր որոշումին մէջ ականջ չէ տուած «միլիոնաւոր քրիստոնեաներու մտավախութիւններու»:

Շար.ը՝ էջ 3

**«ԱՐԺԷՔՆԵՐ ՈՏՆԱՀԱՐԵԼՈՒ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՄԱՉԲՈՒՆՔՆԵՐ ԱՆՏԵՍԵԼՈՒ ԹՈՒՐԲԻՈՅ
ՎԱՐՔԱԳԻԾԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ»**

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Քիչ առաջ համացանցի ճամբով իմացանք, թէ թրքական դատարանը որոշած է Կոստանդնուպոլսոյ յունաց Այա Սոֆիա պատմական մայր տաճարը վերածել մզկիթի:

Արդարեւ, 537 թուականի կառուցուած այս տաճարը բիզանդական ճարտարապետական արուեստի գագաթը կը նկատուի: Բիզանդական կայսրութեան անկումով եւ Օսմանեան կայսրութեան գրաւումով՝ 1453-ին, տաճարը վերածուած էր մզկիթի եւ ապա՝ 1935-ին, թանգարանի:

Անցնող օրերուն եկեղե-

ցիներու պետեր եւ ընդհանրապէս միջազգային շրջանակներ կոչ ուղղեցին Թուրքիոյ՝ չդիմելու Այա Սոֆիան վերստին մզկիթի վերածելու քայլին եւ պահելու անոր ներկայ կարգավիճակը: Դայ թէ օտար մամլոյ ներկայացուցիչներ ուղեցին մեր տեսակետը ունենալ այս մասին: Մենք չուզեցինք կարծիք յայտնել՝ նախատեսելով թրքական դատարանին տալիք որոշումին բնոյթը: Կ'ուզենք հետեւեալ ընդգծումները կատարել.

Առաջին. Թուրքիան՝ իր Նախագահին ներկայ խախտեռնութեան ճամբով, հոգետոր ու մշակութային արժէքներ ոտնահարելու, միջազգային օրէնքով ճշդուած սկզբունքներ անտեսելու եւ պատմութիւնը նենգափոխելու իր վարքագիծը փաստօրէն կը շարունակէ:

Երկրորդ. մեկնելով ներկայի եւ ապագայի իր ներքին թէ արտաքին շահերէն, ինչպէս նաեւ աշխարհաքաղաքական նպատակներէն, Թուրքիան նոյնիսկ կ'ատեսէ իր հին թէ նոր բարեկամներու թելադրութիւնը:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շար.ը՝ էջ 4

**ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ
ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԱԾ Է ԱՐՑԱՆԻ
ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ**

Միացեալ Նահանգներու Զոնկրէսի Ներկայացուցիչներու տան Յատուցումներու յանձնախումբը Արցախի ականազերծման ծրագիրի ֆինանսաւորումը ապահովելու հարցին մէջ առաջին քայլը կատարած է:

Ամերիկայի Դայ դատի յանձնախումբը կը հաղորդէ, որ Յատուցումներու յանձնախումբը որդեգրած է օրէնսդրական հաշուետուութիւնը՝ անուղղակի կերպով կոչ ուղղելով շարունակելու Միացեալ Նահանգներու Միջազգային զարգացման գործակալութեան կողմէ՝ 2021-ի ֆինանսական տար-



ան Արտասահմանեան օգնութեան օրինագիծի ծիրին մէջ Արցախի մէջ կատարուող մարդասիրական ծրագիրի ֆինանսաւորումը:

Շար.ը՝ էջ 3

**ՆԱԽԱԳԱՅ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆ
ԱՅՅԵԼԵՑ ԱՐՑԱՆ**

**ՆԱԽԱԳԱՅ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԱՐՑԱՆ
ԻՐ ԱՊԱԳԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՄԷԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ՝
ՀՁՐ ՊԵՏՈՒԹԻՒՆ ԸԼԼԱՆ ՈՒ ՄԵԱԼ»**



Դայաստանի Դանրապետութեան Նախագահ Արմէն Սարգսեան երէկ աշխատանքային այցելութիւն տուած է Արցախ: Ստեփանակերտի մէջ տեղի ունեցած է Դայաստանի Նախագահի հանդիպումը Արցախի Դանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութիւնեանին հետ. այս մասին կը յայտնեն Նախագահի աշխատակազմէն:

Նախագահ Սարգսեան անգամ մը ես շնորհաւորած է յաջողութիւն մարթած է Արայիկ Յարութիւնեանին՝ վատահութիւն յայտնելով, որ ան իր փորձառութեամբ ու գիտելիքներով յաջողութեամբ պիտի շարունակէ ծառայել հայրենիքին: «Կ'ուզեմ ձեր միջոցով շնորհաւորել նաեւ Արցախի ամբողջ ժողովուրդը, որովհետեւ Նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնները կատարեցին ժողովրդավարական ձեւով», ըսած է Նախագահը՝ աւելցնելով. «Շնորհակալութիւնս փոխանցեցեք նաեւ Նախագահական ընտրութիւններու միւս մասնակիցներուն, որոնք անձնապէս յաղթեցին, բայց յաղթեցին միասին» ցոյց տալով աշխարհին, որ Արցախը ոչ միայն ամուր ու հօգր, այլեւ ժողովրդավարական երկիր է, ինչպէս նաեւ՝ ազատ երկիր, ուր տեղի կ'ունենան ազատ ընտրութիւններ: Անոնք պետք է հպարտ ըլլան, քանի որ իրենց ներդրումը ունեցան այս գործընթացին մէջ: Կ'ուզեմ ձեզի, ինչպէս նաեւ Արցախի բոլոր քաղաքացիներուն խախ եւ առաջ մաղթել առողջութիւն: Վստահ եմ, որ պիտի յաղթահարենք նաեւ այս դժուար վիճակը եւ երթանք յառաջ՝ ամրապնդելով եւ Դայաստանի Դանրապետութիւնը, եւ՝ Արցախի Դանրապետութիւնը»:

Շար.ը՝ էջ 4

**ՔՈԼՈՐԱՏՈՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ
ՍՏՈՐԱԳՐԱԾ Է ՀԱՅՈՑ
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԳԱՄԱՄԵՆԴՄԱՆ ԲԱՆԱԶԵԻԸ**



Քոլորատոյի Նահանգապետ Ճերըտ Փոլիս ստորագրած է պետական վարժարաններու մէջ Դրեական ողջակիզման, Դայոց ցեղասպանութեան եւ այլ ցեղասպանութիւններու մասին դասաւանդել պահանջող բանաձեւը, որով անկկա օրէնքի ուժ ստացած է:

Արեւմտեան Ամերիկայի Դայ դատի յանձնախումբը կը տեղեկացնէ, որ այս արարուան մարտին ներկայացուած բանաձեւը 5 յունիսին հաստատուած էր Նահանգային խորհրդարանի կողմէ, իսկ արդէն նոյն ամսուան 10-ին՝ Նահանգային ծերակոյրդի կողմէ:

Այս առնչութեամբ Արեւմտեան Ամերիկայի Դայ դատի յանձնախումբի ատենապետ, իրաւաբան Նորա Յովսէփեան շնորհակալութիւն յայտնած է Նահանգապետին եւ Նահանգի օրէնսդիր մարմինին՝ Քոլորատոյի վարժարաններուն մէջ Դայոց ցեղասպանութեան դասաւանդումը նկատելով կարեւոր քայլ Նահանգի հայ բնակչութեան համար:

8 յուլիսին տեղի ունեցած ստորագրութեան արարողութեան ներկայ էր նաեւ «Քոլորատոյի հայեր» կազմակերպութեան ներկայացուցիչ Սոնա Դետեշեանը: Նահանգապետը իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնած է բանաձեւի հաստատման ջանքերու համար կենսական դերակատարութիւն ունեցած Արեւմտեան Ամերիկայի Դայ դատի յանձնախումբին, Քոլորատոյի Դայ դատի յանձնախումբին ու վերջինիս ներկայացուցիչ Սիմոն Մաղաբեանին:

Կը նշուի, որ բացի Քոլորատոյէն՝ Միացեալ Նահանգներու 12 այլ Նահանգներու մէջ Դայոց ցեղասպանութեան դասաւանդում կը կատարուի:

ՆԱԽԱԳԱՀ ՍԻՍԻԻ ԿՈՂՄԵ ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ՝ ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆԻՆ

Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուհ երեկ Եգիպտոսի նախագահ Ապտալ Ֆաթթահ Սիսիին ստացավ նամակ մը, որուն մէջ նախագահ Սիսի իր երկրին պատրաստակամութիւնը կը յայտնէր՝ Լիբանանի կայունութեան եւ բարգաւաճման օժանդակելու եւ կը շնշտէր, որ իրենք ամեն ջանք ի գործ պիտի դնեն նպաստելու Լիբանանի եղբայր ժողովուրդի կացութեան բարելաւման եւ վերականգնման:



Նամակին մէջ նախագահ Սիսի նաեւ յոյս կը յայտնէր, որ Լիբանանի վարած բանակցութիւնները՝ ելեւմտական հաստատութիւններու հետ, յաջողութեան հասնին եւ նուազեցնեն Լիբանանի տնտեսութիւնը հարուածած վնասները:

«ԼԻԲԱՆԱՆ ՊԱՏԱՆԳ Ե ՀԸԶՊԱՆԱՆՅՈՒՄՈՍ»

ՇԵՇՏԵՅ ՍԱՍԻ ԺԵՄԱՅԷԼ

Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժեմայել յայտնեց, որ Յրգալայա աշխարհին հետ պատերազմներ կը մղէ, ուստի բնական է, որ անոնք հակադարձեն անոր:



«Յրգալայա Լիբանանը միջամուկ դարձուցած է իր տաճնապետներուն եւ լիբանանցիները վերածած է Իրանը պաշտպանող վահանի մը: Լիբանան պատանդ է Յրգալայայի մօտ, իսկ այդ հարցին լուծումը կարելի է ապահովել լիբանանեան պետութեան որոշումն ու գերիշխանութիւնը վերահաստատելով: Այդ մէկը կը կատարուի, երբ պետութիւնը չափ ու սահման կը ճշդէ Յրգալայային եւ կը բացուի Միջազգային ընտանիքին», հաստատեց ան:

Ժեմայել ընդգծեց, որ Միացեալ Նահանգներ Իրանի հետ հարց ունին, սակայն այդ հարցին ու տաճնապին մէջ Լիբանան ոչ մէկ տեղ ունի:

Ան կոչ ուղղեց Յրգալայայի՝ ինքզինք ղեկելու պետութեան յարկին տակ եւ ենթարկուելու օրէնքներուն: «Այդ ժամանակ է, որ մենք կը պաշտպանենք զինք, առանց ուրիշին առիթ տալու: Սակայն Յրգալայա կառչած կը մնայ իր հաշտոյն գործելու եւ Լիբանանը այլոց տաճնապետներուն մէջ խրելու իր կեցուածքին», ըսաւ Ժեմայել:

«Ա 321 ՆԷՕ» ՏԻՊԻ ԱՌԱՋԻՆ ՕԳԱՆԱԲԸ ՀԱՍԱԻ ԼԻԲԱՆԱՆ



«Միտլը Իսթ» ընկերութեան պատկանող «Ա 321 ՆԷՕ» տիպի առաջին օդանաւը երեկ հասաւ Պէյրութի միջազգային օդակայան, ուր ներկայ էին հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Միշել Նաժժար, «Միտլը Իսթ» ընկերութեան տնօրէն Սոհամետ Յուբ, քաղաքական անձնաւորութիւններ եւ լրատուամիջոցներու ներկայացուցիչներ:

«Միտլը Իսթ» ընկերութեան տնօրէն Սոհամետ Յուբ բացատրեց, որ այս օդանաւը աւելի նուազ քանակով ածխածին կ'արձակէ, հետեւաբար բնապահպանութեան բարեկամ է, կը նուազեցնէ նաեւ գործառնութեան ծախսերը ընկերութեան համար: Ան նաեւ նշեց, որ «Միտլը Իսթ» այս օդանաւը ձեւաւորած է 160 ճամբորդի համար՝ 240-ի փոխարէն: Տնօրէնը աւելցուց, որ օդանաւին մէջ պիտի ըլլայ նաեւ համացանցի դրութիւն, եւ նոյն տիպի 9 այլ օդանաւներ ես պիտի հասնին յաջորդ ամիսներուն: Անդրադառնալով օդանաւի ծախսերուն՝ տնօրէնը բացատրեց, որ ատիկա ֆինանսաւորուած է չինական «Այ.Սի.Պի.Սի.» դրամատան կողմէ՝ աւելցնելով, որ այս օդանաւը շահ ապահոված է «Միտլը Իսթ» ընկերութեան, որովհետեւ նախ ծախուած է, ապա ետ վարձուած: Տնօրէնը աւելցուց, որ այդ գումարը օդանաւին յաջորդ 4 տարիներուն վարձքը պիտի ապահովէ:

Շաբ.ը՝ էջ 3

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՐՏԻՆ

- Լիբանանի ներկայ պայմաններուն մէջ քաջալերելով «Ազգակ»-ի աշխատանքները՝ Ազգային մը 300.000 լ. ո.

- «Փէյփալ» ծրագիրին միջոցով՝ Կարին Պետեան (Միացեալ Նահանգներ) 100\$

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՍՍԱՆԻ ԵՒ ՄԵԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԳԵՄՊԱՆ ՇԻԱՅԻ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Երեկ տեղի ունեցաւ վարչապետ Հասսան Տիապի եւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորըթի Շիայի հանդիպումը, որուն աւարտին որեւէ յայտարարութիւն չկատարուեցաւ:

Կառավարական ադրիւններ «Էլ.Պի.Սի.» պատկերասփիւռի կայանին փոխանցած են, որ հանդիպումը աւելի քան լաւ ընթացած է, եւ քննարկուած են Լիբանանի ելեւմտական, տնտեսական եւ ընկերային կացութիւնը, կառավարութեան ծրագիրը, Միջազգային դրամական ֆոնտի հետ բանակցութիւնները, ինչպէս նաեւ անդրադարձ կատարուած է Միացեալ Նահանգներու հաւանական դերին՝ այս թղթածրարներուն մէջ Լիբանանին օգնելու:

ԲՈՂՈՔԻ ՀԱՄԱՔ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳԵՄՊԱՆԱՏԱՆ ԱՌԱՋԵՒ

Մերժելով ամերիկեան միջամտութիւնները լիբանանեան ներքին հարցերուն, յատկապէս դատապարտելով Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանին արտայայտութիւնները, խումբ մը երիտասարդներ 10 յուլիսին բողոքի ցոյց կատարեցին Աուքարի մէջ ամերիկեան դեսպանատան առջեւ:



Ցուցարարները նշեցին, որ բողոքի ցոյցը կազմակերպուած չէ որեւէ կազմակերպութեան կամ կուսակցութեան կողմէ, այլ ատոր մասին կոչ ուղղուած էր ընկերային ցանցերուն վրայ:

Խումբ մը ցուցարարներ փորձեցին քանդել եւ անցնիլ փշաթելերէն, սակայն ապահովական ուժերը ջրցան մեքենաներով եւ խումբերով փորձեցին ետ մղել ցուցարարները:

ՀԱՐԻՐԻ «ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՈՐՈՇ ԱՆԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ ՄԸ ՊԻՏԻ ՎԿԱՅԵՆՔ, ՍԱԿԱՅՆ ԿԸ ԿԱՍԿԱԾԻՄ, ՈՐ ԵՐԿԻՐԸ ՍՈՎԻ ՄԱՏՆՈՒԻ»

Նախկին վարչապետ Սաատ Յարիրի «Էլ Փայիս» սպանական օրաթերթին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին յայտնեց, որ Լիբանանի մէջ քաղաքացիները օրական հրդեհներէ կ'ապահովուեն, որովհետեւ կ'ապահովուեն կը վախճան իրենց կեանքին վրայ եւ մտահոգ են տիրող ծագութեամբ, այդ պատճառով ալ անոնք սկսած են աւելի շատ իրենց բնակարանին մէջ մնալ՝ քան դուրս ելլել:

Քաղաքացիական պատերազմի մը բռնկման հաւանականութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ Յարիրի ըսաւ, որ Լիբանան իր պատմութեան մէջ տնտեսական վատագոյն տագնապի է, որ կը դիմագրաւէ: «Ժողովուրդը

պիտի շարունակէ ցոյցեր կատարել, եւ Լիբանանի մէջ որոշ անկայունութիւն պիտի վկայենք, սակայն կը կասկածիմ, որ Լիբանան սովի մատնելի», ըսաւ ան:

Յարիրի հաստատեց, որ Լիբանան կարիք ունի բարեկարգումներու: «Ես նախատեսած էի, որ Լիբանան Յունաստանի օրինակով կրնայ այս կէտին հասնիլ, բայց եւ այնպէս կարելի էր այս իրավիճակին առաջը առնել, եթէ բարեկարգումները աւելի առաջ կատարուած ըլլային», հաստատեց ան:

Յարիրի ընդգծեց, որ լիբանանցիները 15 տարուան ընթացքին (1975-1990) քաղաքացիական պատե-



Շաբ.ը՝ էջ 3

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ «ԲՈՐՈՆԱ» ԺԱՀՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾՆԵՐՈՒՆ ԹԻԻԸ ՀԱՍԱԻ 2082-Ի, ՄԱՀՈՒՐ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒՆԸ՝ 36-Ի

ՀԱՍԱՆ. «ԿՈՒՂՂՈՒԻՆՔ ՏՈՒԳԱՆԵԼՈՒ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԸ ԽԱՆՏՈՂՆԵՐԸ»

Առողջապահութեան նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, երեկ Լիբանանի մէջ «Քորոնա» ծաիրով վարակուածներուն թիւը հասաւ 2082-ի՝ վերջին 24 ժամուան ընթացքին արձանագրելով 71 նոր վարակուածներ, որոնցմէ 67-ը տեղացիներ են, իսկ 4-ը Լիբանան ժամանած արտերկրի լիբանանցիներ:

Նախարարութիւնը յայտնեց, որ ցարդ «Քորոնա» ծաիրով 36 վարակուած պարագաներ մահացած են:



Ելակերպին պատճառով Լիբանանի ազգային առողջապահութիւնը կը քաղաքացիական ապահովութիւնը կը վտանգուի:

Միւս կողմէ, Հասսան Նախարարութեան կեդրոնին մէջ նախագահեց նախարարութեան անձնակազմի նիստին, որուն ընթացքին ան կոչ ուղղեց՝ անշատելու երկրին դիմագրուած ելեւմտական ծանր պայմանները եւ իրենց մարդասիրական առաքելութենէն, որպէսզի այս փուլին կարելի ըլլայ յաղթահարել ամենէն դժուար մարտահրաւերները եւ պետական թէ սեփական առողջապահական մարզը քաջալերել աշխատելու:

Շաբ.ը՝ էջ 3

ՀԸԹԹԻ. «ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԵՏ ԿԸ ԲԱՆԱԿՑԻՆՔ, ՈՐՊԵՄՈՒ ԻՐԵՆՑ ՕԳԱԿԱՅԱՆՆԵՐԸ ՄԵՐ ԳԻՄԱՑ ԲԱՑ ՊԱՀԵՆ»

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար ՆափՖ Յըթթի հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ արտաքին գործոց նախարարութիւնը երրօրական երկիրներու հետ կը բանակցին, որպէսզի անոնք Լիբանանի դիմաց իրենց օդակայանները բաց պահեն:

Յըթթի հաստատեց, որ այս որոշումը քաղաքական բնոյթ չունի, այլ թեքնիք որոշում մըն է, որ իրենց կը վերաբերի:

Ան շեշտեց, որ լիբանանեան իշխանութիւնները փոփոխութիւններ կատարելու միտումներ չունին՝ աւելցնելով, որ Պէյրութի միջազգային օդակայանին մէջ որդեգրուած միջոցառումները, որոնք սկսած էին «Քորոնա»-ի համաճարակին ընթացքին, նոյն ձեւով պիտի շարունակեն:

Պատասխանելով Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան Իվ Լոտրիանի Լիբանան կատարելիք այցելութեան վերաբերող հարցումի մը՝ Յըթթի յայտնեց, որ այդ մասին ինք իմացած է Իտալիայէն Լիբանան վերադարձի ընթացքին, «սակայն ֆրանսացի պատասխանատուներէն ոչ ոք կապուած է եւ յստակ ժամադրութիւն ճշդած՝ Լոտրիանի կատարելիք այցելութեան մասին», ըսաւ ան:

Նշենք, որ Յըթթի երեկ նախարարութեան կեդրոնին մէջ ընդունեց Լիբանանի մէջ ճափոնի դեսպան Թաքիշ Օքուպուն, որուն հետ քննարկեց Լիբանանի եւ ճափոնի միջեւ արհեստագիտական գործակցութեան պայմանագիրին վերաբերող հարցեր:



Նախարարին այցելեց նաեւ Լիբանանի մէջ Թունուզի դեսպան Սոհամետ Քարիմ Պուտալին, որուն այցելութիւնը ունէր իրաժեշտի բնոյթ:

«ՎՆԱՍԱԿԱՐ ԵՆ ԱՅՆ ԼՈՒՐԵՐԸ, ԹԷ ՎԱՏԻԿԱՆԸ ՀԸԹԹԻՆ ԻՐ ՄՕՏ ԿԱՆՉԱԾ Է»

ՇԵՇՏԵՅ ՖԱՐԻՏ ԽԱՉԵԼ

Վատիկանի մէջ Լիբանանի դեսպան Ֆարիտ Խազէն հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար ՆափՖ Յըթթիի Լիբանան կատարած այցելութիւնը շատ կարեւոր էր՝ աւելցնելով, որ անկիւ առիթն էր Լիբանանի մէջ պապական նուիրակին եւ Վատիկանի լիբանանեան դեսպանատան ճիգերուն:

Ան հաստատեց, որ օրական դրութեամբ կապ եւ գործակցութիւն կայ Վատիկանի պատասխանատուներուն հետ, որովհետեւ Վատիկանն ու յատկապէս Պապը յատուկ գուրգուրանք կը ցուցաբերեն Լիբանանի հանդէպ:

Շաբ.ը՝ էջ 3

ԱՏՐԱՀԻ. «ԻՍՐԱԵԼԷԱՆ ՈՒԺԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼԱԾ ԵՆ ԵՐԵՐ ԿԱՍԿԱԾԵԼԻՆԵՐ, ԱՊԱ՝ ԱԶԱՏ ԱՐՉԱԿԱԾ»

Իսրայէլեան ուժերու բանբեր Ալիխայ Ատրաի երեկ յայտնեց, որ նախանցել գիշեր իսրայէլեան ուժերը նշմարած են երեք կասկածելիներ, որոնք փորձած են լիբանանեան սահմանէն փշաթելերը քանդել եւ իսրայէլեան կողմ անցնիլ:



Ատրաի յայտնեց, որ իսրայէլեան ուժերը հետեւած են անոնց քայլերուն, մինչեւ որ իսրայէլեան խմբակ մը ձերբակալած է զանոնք:

Ան հաստատեց, որ իսրայէլեան ուժերը կը հսկեն սահմանին եւ կ'արգիլեն որեւէ նման ներթափանցում, որ իսրայէլեան գերիշխանութեան դէմ ոսնձգութիւն կը նկատուի:

Աւելի ուշ իսրայէլեան ուժերը ազատ արձակեցին Լիբանանէն Իսրայէլ ներթափանցած երեք կասկածելիները, որոնք տուտանցիներ էին:

Իսրայէլեան ուժերը Ատրայի մօտ զանոնք յանձնեցին ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն, որոնք իրենց կարգին՝ լիբանանեան բանակի գաղտնի սպասարկութեան, որպէսզի զանոնք հարցաքննէ եւ իրաւական համապատասխան քայլերու դիմէ:

Լիբանանահայ հանրաժանօթ երգիչ Ատիս Զարմանտեանի դուստրը՝ Լիանա Զարմանտեան 1000 ամ. տոլար կը նուիրէ Զամազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան:

«ԾՈՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԹՈՒՐԲԻՈՅ ԴԷՄ ՍԵՒ ՔԱՐՈՉՉՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԱԳԻՆ»

Կ'ԸՍԵ ԲԱՆԸՆ



Թուրքիոյ նախագահի բանքեր Իսթանբուլ քաղաքէն յայտարարեց. «Թուրքիոյ դէմ կան սեւ քարոզչութեան ծրագիրներ, որոնք կը գործադրուին Ծոցի արաբական երկիրներուն կողմէ: Ծոցի երկիրներու այդ ծրագիրները արաբական հասարակութեան զօրակցութիւնը չեն վայելեր»:

«Այդ երկիրներու ղեկավարները պէտք է գիտակցին, թէ Թուրքիոյ դէմ այդ քայլերը իրականութեան մէջ իրենցմէ կը հեռացնեն իրենց ժողովուրդները», ըսաւ ան՝ Նշելով.

«Վերջերս միջազգային ազատական ճառերը «խսկամական շարժումներ», «խսկամական կուսակցութիւններ» եւ «Իսլամ եղբայրներ» եզրերը կ'օգտագործեն իբրեւ սարսափեցման գործիք»:

Անդրադառնալով Միացեալ Նահանգներու նախագահի Ազգային ապահովութեան նախկին խորհրդատու Ճոն Պոլթընին Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանը «արմատական իսլամ» կոչելուն՝ Քալըն ըսաւ, որ պաշտօնագրովմէն առաջ յաճախ խօսած է Պոլթընի հետ, «սակայն նախապէս ինծի այսպիսի բան չըսաւ»:

«Անոր վերջին յայտարարութիւններուն պատճառը այն է, որ այդ խօսքերը արեւմտեան շրջանակներուն մէջ այլեւս շատ տարածուած են», ըսաւ Թուրքիոյ նախագահին խորհրդակցանը: Ան նաեւ Արաբական Լիգային կոչ ուղղեց՝ փոխան Թուրքիոյ դէմ հաղորդագրութիւններ հրապարակելու, առանկէ եւս հետաքրքրուելու Պաղեստինեան դատով:

Ան դատապարտեց Այսրոյորդանանէն հողեր կցելու իսրայէլեան ծրագիրը՝ զայն նկատելով «բնաբարման ու բռնագրաւման նոր քաղաքականութիւն»՝ աւելցնելով, որ կցման ծրագիրը անօրինական է եւ Անգարա զայն «կտրուկ կերպով» կը մերժէ:

«Իսրայէլեան կցման ու բռնագրաւման քաղաքականութիւնները պատճառ դարձան Պաղեստինեան դատի բարդացման: Այդ քաղաքականութիւնները վերջ տուին խաղաղութեան, երկու պետութիւններու հարցերու լուծման եւ տարածաշրջանին մէջ կայունութեան ու ընկերային բարօրութեան հաստատման բոլոր նախաձեռնութիւններուն», ըսաւ Քալըն:

«ԱՐԺԷՔՆԵՐ ՈՏՆԱՀԱՐԵԼՈՒ ...»

Շարունակուած Ա. Էջեն

Երրորդ. Թուրքիա իր այս որոշումով գիտակցօրէն կը հարուածէ քրիստոնեայ-իսլամ փոխադարձ յարգանքի ու վստահութեան վրայ հիմնուած համակցութիւնը՝ տեղական, շրջանային ու միջազգային մակարդակներու վրայ, հակառակ այս գծով կատարուած զգուշացումներուն:

Չորրորդ. Թուրքիա իր ներկայ քայլով կու գայ անգամ մը եւս հաստատելու, որ Արեւմուտքին եւ քրիստոնեայ համայնքներուն բացուելու իր ցոյց տուած Նշանները կեղծ էին:

Յինգերորդ. ո՛րք էին արեւմտեան աշխարհի ղեկավարները, քաղաքական թէ հոգեւոր, երբ Յայոց ցեղասպանութենէն ետք հայ ժողովուրդին պատկանող հազարաւոր եկեղեցիներ ափռուներու, սրճարաններու, մզկիթներու եւ այլ հանրային վայրերու վերածուեցան...:

Այո՛, ցեղասպանութիւնը այնպէս կը շարունակուի նոյն ցեղասպանին կողմէ՝ աշխարհի լուծութեան դիմաց: Օսմանեան կայսրութեան այլամերձ գաղափարախօսութիւնը այնպէս կը թափանցէր ամէն տեղ՝ արաբական աշխարհին սկսեալ մինչեւ արեւմտեան երկիրներ՝ աշխարհի լուծութեան դիմաց:

ԱՖԻԼ AFHIL
ARMENIAN MUTUAL FUND
Since 1998
20 Years of Commitment

The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others

Mahatma Gandhi

Health Insurance
 Travel Insurance
 GoodCare Clinic
 Car Insurance
 Health Clubs

Home Medical Equipment
 BOB - Western Union
 University and Student Fund
 «99/13С» Health Magazine

www.afhil.com | AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor | Tel. 01 242 556/7

ՊՈՐԵԼԸ ՄԵՂԱԴՐԵԼՈՎ ԹՈՒՐԲԻՈՅ ՆԿԱՏԱՍԱՐ ՇԱՏ ՄԵՂՍ ԲԱՐԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՄԵՋ՝

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԽԻՍՏ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԱԾ Է ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎՈՒՆ ՄԵՋ ԱՆԳԱՐԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Եւրոպական խորհրդարանին մէջ տեղի ունեցած նիստին, որ նուիրուած եղած է Միջերկրական ծովուն մէջ կայունութեան եւ անվտանգութեան հաստատման, խորհրդարանականները խիստ կերպով քննադատած են ծովուն արեւելեան հատուածի մէջ՝ Կիպրոսի ափերուն, Թուրքիոյ կողմէ իրականացուող հորատման աշխատանքները: Այս մասին կը հաղորդէ թրքական «Կազեթ Էթրընճա» օրաթերթը:

Խորհրդարանի նիստը գումարուած է «Կայունութիւնն ու անվտանգութիւնը եւ Թուրքիոյ բացասական դերը Միջերկրական ծովուն մէջ» խորագիրով:

Նիստի ընթացքին մեղադրանքներ հնչած են նաեւ Եւրոպական Միութեան անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար ժողգէի Պորելի հասցէին՝ Թուրքիոյ նկատմամբ իրականացուած Թուրքիոյ նկատմամբ միութեան ժխտական ուղղութեամբ, որովհետեւ վերջինս Սուրիոյ եւ Լիպիոյ մէջ ընթացող իրադարձութիւններէն ազդուեցաւ, նաեւ՝ տարածաշրջանին մէջ ազդու տարրերէն է»:

«Յակառակ Եւրոպական Միութեան եւ Թուրքիոյ միջեւ կարգ մը հարցերու շուրջ գոյութիւն ունեցող տարակարծութիւններուն՝ կարելի չէ անտեսել մեր հասարակաց շահերը, որոնք կ'ընդգրկեն Եւրոպայի եւ Լիպիոյ միջեւ ընթացող իրադարձութիւններէն ազդուեցաւ, նաեւ՝ տարածաշրջանին մէջ ազդու տարրերէն է»:

ԼԻՊԻՈՅ ԱՓԵՐՈՒՆ ՍՕՏ ԹՐԵԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ «ՄԵԾ ՈԱԶՄԱՓՈՐՁԵՐ» ՅԱՅՏԱՐԱՐԵԼԵՆ ԵՏԵ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԼԻՊԻՈՅ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ ՈԱԶՄԱՓՈՐՁԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԷ

Եգիպտոսի զինեալ ուժերը հինգշաբթի օր սկսած են Լիպիոյ հետ սահմանին վրայ ցամաքային ու ծովային «Վճռում 2020» ռազմափորձերու գլխաւոր փուլին: Այս մասին կը հաղորդէ «Մայաթին»-ը:

Ռազմափորձերուն կը մասնակցին Եգիպտոսի բանակի ծովուծ, ցամաքային ուժերն ու հակաօդային պաշտպանութեան ուժերը: Ռազմափորձերուն կը հետեւի Եգիպտոսի պաշտպանութեան նախարար Մուհամմետ Չաքին, որ յայտնեց. «Եգիպտոս այլ

երկիրներուն ներքին հարցերուն միջամտելու նպատակ չունի, սակայն մեր ազգային վտանգութեան նկատմամբ որեւէ սպառնալիք պիտի չընդունինք»:

Թրքական բանակը մէկ օր առաջ յայտարարած էր, որ լիպիական ծովափին մօտ ծովային «մեծ» ռազմափորձեր կը կատարէ: Թրքական իշխանամետ «Ենի Շաֆաք» օրաթերթը՝ յղում կատարելով թրքական օդուժին, հաղորդեց, որ «Նաֆթեքս» ռազմափորձը տեղի պիտի ունենայ լիպիական ծովափին

մօտ գտնուող երեք շրջաններու մէջ, եւ անոնցմէ իւրաքանչիւրը պիտի կրէ անշատ անուն մը՝ «Պարպարուս», «Թիւրկիթ Նախագահ» եւ «Չաքա Պէյ»:

Թրքական օրաթերթին համաձայն, «միջազգային ջոկերուն մէջ կատարուող ռազմափորձին պիտի մասնակցին 17 պատերազմական օդանաւեր եւ 8 մարտանաւեր, որպէսզի Թուրքիան ցուցադրէ տարածաշրջանին օդէն ու ծովէն տիրելու իր կարողութիւնը»:

ՔԱՆԱՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԼԻՄԲՈՒՆ ...

Շարունակուած Ա. Էջեն

Նշենք, որ Լիբանանահայութեան ճգնաժամի կացութեան, ամկայ մարտահրաւերներուն եւ անոր ապագային սպառնացող վտանգին ի տես՝ ԶՅԴ Զանաւայի Կեդրոնական կոմիտէն, մայիս 20-ին յառաջացուց Լիբանանահայութեան օժանդակութեան Զանաւայի մարմինը:

Վարձքը կատար՝ տոյն ծրագիրին ձեռնարկողներուն, աշխատանքը ի կատար ածելու սիրոյն անխնայ ծառայողներուն եւ յատկապէս բոլոր նուիրատուներուն՝ ազգասիրական ու հայրենասիրական, նուիրական ու օրինաբեր իրենց արարքին համար:

Դրամահաւաք-թելեթոնին գոյացաւ 206 հազար քանադական տոլար (152 հազար տոլար):

Նուիրատուներու եւ բարերարներու ցանկը շուտով կը հրատարակուի:

Նուիրահաւաքը կը շարունակուի: Առցանց նուիրատուութիւնները կարելի է կատարել հետեւեալ յղումով.

https://camam.akaraisin.com/Aid4Lebanon

Առցանց Լսարան

Զորեքշաբթի, 15 Յուլիս 2020-ին, երեկոյեան Պէյրուֆի ժամանակացոյցով ժամը 18:00-ին:

Մասնակցութեան համար գրել minas777@gmail.com եւ նամակին կամ +961 70 80 70 50 համարին (WhatsApp)

Միջազգային սփոքրագիտութիւնն ու ՀԱՅԱՍՏԱՆԻ Սփոքր

Չեկուցող՝ Փրոֆ. Խաչիկ Թեօփէլեան
Սփիւռքագէտ, Ունելեյան համալսարան

«ՌՈՒՄԻԱՆ Կ'ԱԶԱԿՅԻ ՔԻՒՐՏԵՐՈՒ ԵՒ ԳԱՄԱՍԿՈՍԻ ՄԻՋԵՒ ԵՐԿԻՆՕՍՈՒԹԵԱՆ»

Կ'ԸՍԵ ԶԱՆԱՐՈՎԱ

Ռուսիան կ'աջակցի Սուրիոյ ապագային գծով քիւրտներու եւ Դամասկոսի միջեւ երկխօսութեան: «Երկիր»-ին համաձայն, այս մասին յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանքեր Մարիա Զախարովա: «Հարիւրամեակներ շարունակ Սուրիան եղած է երկիր մը, ուր ազգային եւ կրօնական տարբեր խումբեր խաղաղ գոյակցութիւն ունեցած են եւ ապահով ապրած: Ասիկա, հաւանաբար, Սուրիոյ այցեքարտն էր: Ի հարկէ, ասիկա չի կրնար յարգանք չառաջացնել, իսկ այս մասին մենք բազմիցս խօսած ենք: Մենք համոզուած ենք, որ նման պատմական աւանդութիւններ պէտք է ամբողջութեամբ պահպանուին եւ շարունակուին: Մենք կը մեկնինք անկէ, որ սուրիացի քիւրտները Սուրիոյ ժողովուրդին անբաժանելի մասն են: Մեկնելով այս սկզբունքային դիրքէն՝ Մոսկուան կ'աջակցի երկխօսութեան, որ կը շարունակուի քիւրտներու եւ Դամասկոսի միջեւ՝ իրենց հասարակաց հայրենիքի հետագայ զարգացման վերաբերեալ», ըսած է Զախարովա:

ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳՍԵԱՆ. «ԱՐՑԱՆ ...»

Շարունակուած Ա. Էջեն

Շնորհակալութիւն յայտնելով՝ Արցախի նախագահը Նշած է, որ նախագահական ընտրութիւններուն մասնակցող թեկնածուներուն մեծ մասը ներկայ քաղաքական իշխանութեան մաս կը կազմէ եւ պատրաստակամ է ապահովել երկրի յառաջընթացն ու զարգացումը, իսկ անոնք, որոնք ներգրաւուած չեն, նոյնպէս կը շարունակեն իրենց գործունեութիւնը՝ յանուն Արցախի: Արայիկ Յարութիւնեան շնորհակալութիւն յայտնած է նաեւ Յայաստանի իշխանութիւններուն՝ Արցախի զարգացման ուղղուած գործնական ծրագիրներուն աջակցելու համար. «Կ'ուզեմ Նշել, որ միասին պիտի յաջողինք ոչ միայն յաղթահարել իրավիճակը, այլ նաեւ մեր հայրենիքի զարգացման վերաբերող յառաջընթաց ապահովել»:



Հանդիպումին անդրադարձ կատարուած է Արցախի Հանրապետութեան հզօրացման եւ զարգացման վերաբերող ընթացիկ եւ հեռանկարային շարք մը ծրագիրներու:

Նախագահներու առանձնագրոյցին յաջորդած է ընդլայնուած հանդիպումը, որուն մասնակցած են Արցախի Հանրապետութեան Ազգային Ժողովին նախագահ Արթուր Թովմասեանը, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսեանը, արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեանը, Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Սամուէլ Բաբայեանը եւ պաշտօնատար այլ անձեր:

Հանդիպումին անդրադարձ կատարուած է Հայաստանի եւ Արցախի փոխգործակցութեան եւ Արցախի զարգացման ծրագիրներուն:

Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակութեան հետ կապերու վարչութեան տեղեկացուցին, որ նախագահ Արմէն Սարգսեան Արցախի մէջ ունեցած հանդիպումներէն ետք գրոյց ունեցած է լրագրողներու հետ:

Ան Նշած է, որ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններէն ետք առաջին անգամ է որ Արցախ կ'այցեցէ՝ հաստատելով, որ Ստեփանակերտի մէջ ունեցած հանդիպումները շատ օգտակար եղած են, իսկ քննարկումներու առաջնը միասնականութեան զարգացումը եղած է:

«Արցախը ընտրութիւններէն ետք միասնականութեան օրինակ ցոյց տուած է այն առումով, որ տարբեր քաղաքական ուժեր միատրուած են նոյն կամավարութեան մէջ եւ պիտի ծառայեն իրենց հայրենիքին, մեր հայրենիքին՝ Արցախի Հանրապետութեան», ընդգծած է նախագահ Արմէն Սարգսեանը:

Շարունակելով գրոյգը՝ ան տեղեկացուցած է, թէ հանդիպումներուն խօսած են նաեւ զարգացման տարբեր ուղղութիւններու մասին:

«Կը կարծեմ, թէ Արցախը ապագայի համար մէկ ընտրութիւն ունի, եւ այդ ընտրութիւնը հզօր պետութիւն ըլլալն ու մնալն է: Լեռնային Ղարաբաղի տագնապը ուրիշ լուծում չունի, բացի հզօր Արցախէն, իսկ հզօր Արցախը, ունի չորս հիմնական սիւներ՝ արցախահայութեան հայրենասիրութիւնն ու կամքը, բանակը, տնտեսութիւնը եւ ժողովրդազօրութիւնը:

Նշենք, որ նախագահ Արմէն Սարգսեան հանդիպում ունեցած է նաեւ Արցախի նախկին նախագահ Բակօ Սահակեանին հետ: